

2016 թվականին կազմել է Վայոց ձորի մարզի տարեկան աշխատանքային ծրագիրը 2015-2018 թվականների զարգացման ծրագրի շրջանակներում, այն իր կառուցվածքով համահունչ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությանը, աղքատության հաղթահարման ռազմավարությանը և Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրին: Մարզային զարգացման ծրագիրը կնպաստի Վայոց ձորի 29 համայնքների կողմից ներկայացված առաջնահերթությունների ու մարտահրավերների արդյունավետ լուծմանը և նմանատիպ ծրագրերի իրականացման շնորհիվ ՀՀ Վայոց ձորի մարզն աստիճանաբար կդառնա Հայաստանի զարգացած տարածքներից մեկը: Մարզի զարգացման ծրագիրը նաև ներդրումներ կատարելու առաջարկ է՝ ուղղված միջազգային, դոնոր և այլ կազմակերպություններին, գործարարներին, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Մարզպետարանն ակնկալում է, որ ծրագրում ընդգրկված խնդիրներն ու առաջարկությունները հետաքրքրություն կներկայացնեն նշված շահագրգիռ անձանց ու կազմակերպությունների համար և պատրաստ է բոլոր ներդրողների հետ փոխշահավետ համագործակցության՝ հանուն Վայոց ձորի մարզի կայուն զարգացման:

2016 թվին տարեկան աշխատանքային պլանով զարգացման ծրագրերի իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները նախատեսվել է ավելի քան 12 մլրդ դրամ: 2016 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ իրականացվել են 14.6 մլրդ դրամի զարգացման ծրագրեր:

2016թ.Վայոց ձորի մարզում, ըստ արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ընթացիկ գներով) թողարկվել է 15.8 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 15.7 մլրդ. դրամի արտադրանք, աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 2 % :

Հիմնականում աճը ապահովվել է էլ էներգիայի, հանքային ջրերի, խմիչքների և հանքաարդյունաբերության ծավալների աճով:

Մարզպետարանը մարզի գործարարներին, ձեռներեցներին աջակցել է թողարկվող արտադրանքի գովազդման, հանրապետական և միջազգային ցուցահանդեսներում նրանց մասնակցության ապահովման ուղղությամբ:

Մարզում գործարարության աշխուժացման նպատակով բազմակողման համագործակցության հուշագիր է ստորագրվել Իրանի իսլամական Հանրապետության Ուրմիա նահանգի, ՌԴ Նիժնի-Նովգորոդի, Արխանգելսկի, Բելոռուսիայի հանրապետության Մինսկի մարզի և ՀՀ Վայոց ձորի մարզի ղեկավարության միջև:

Մարզի տնտեսության և մասնավորապես արդյունաբերության զարգացման ոլորտում առկա են մի շարք հիմնախնդիրներ՝

Մարզի տնտեսության զարգացման համար դեռևս բավարար չեն կատարված ներդրումների ծավալները: Հրատապ խնդիր է մարզի միակ՝ Եղեգնաձորի պահածոների գործարանի վերագործարկումը:

Արդյունաբերության ոլորտում դեռևս չի ձևավորվել ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման մեխանիզմը, ցածր է մնում արտադրության արդյունավետության և տնտեսական ներուժի օգտագործման մակարդակը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Մարզպետարանի աջակցությամբ ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվել են հետևյալ աշխատաքները՝

- 1) ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորության տրամադրման ծրագրեր
- 2) Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության ծրագրեր
- 3) ՓՄՁ սուբյեկտների թողարկվող արտադրանքի, մատուցվող ծառայությունների շուկաներ առաջ մղման աջակցության ծրագրեր
- 4) ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն
- 5) Ուսուցողական աջակցություն
- 6) Նեղ մասնագիտական խորհրդատվություն:

8 սկսնակ գործարարների տրամադրվել է ֆինանսական աջակցություն 100% երաշխավորությամբ-23.4 մլն. ՀՀ դրամի չափով:

Այս նպատակներին հասնելու համար կարևորվում է ՓՄՁ ԶԱԿ-ի Վայոց ձորի մարզի ներկայացուցչությունների, մարզպետարանի, մարզային զարգացման հանձնաժողովի, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների անմիջական աջակցությունն ու մասնակցությունը գործընթացին:

Կարևոր է շեշտը դնել հատկապես ՓՄՁ աջակցության տարեկան պլանում գյուղական համայնքների շահառուների տեսակարար կշռի մեծացման վրա:

Առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երին և համայնքների գործարար ներկայացուցիչներին:

Զբոսաշրջությունը Վայոց ձորի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մարզի 300 պատմամշակութային հուշարձաններ՝ տարածված 29 համայնքներում: Ժամանակագրական առումով դրանք ներկայացնում են մեր թվարկությունից առաջ 7-րդ հազարամյակից մինչև 20-րդ դարն ընկած հատվածը: Բազաթիվ պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանների, բնական տեսարժան վայրերի առկայությունը, բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը,

էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, Ջերմուկի առողջարանի և հանգստյան գոտու ճանաչվածությունը և ծմեռային զբոսաշրջության համար նրա կարողությունները մարզը դարձրել են զբոսաշրջության համար գրավիչ և նպաստավոր տարվա չորս եղանակների համար: Ներկայումս զբոսաշրջության ձևերի մեջ տեղի են ունենում որակական փոփոխություններ: Պասիվ հանգստի ձևերից անցում է կատարվում դեպի ավելի ակտիվ ձևերը: Վայոց ձորի մարզում կարելի է առաջադրել զբոսաշրջության հետևյալ ուղղությունները՝ էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ (ժայռամագլցումներ, անձավագիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ձիավորություն լեռնային տարածքներով, կանյոնինգ, ձկնորսություն), պատմամշակութային տուրիզմ:

Մարզում գործում են բազմաթիվ ժամանցի վայրեր, հիսունից ավելի առողջարաններ, հյուրանոցներ: Շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում վարվող պետական քաղաքականության, զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է քանակական և որակական աճ: 2016 թվականին մազ է այցելել շուրջ 18000 զբոսաշրջիկ: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհները, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը: Դրանով է պայմանավորված ՌԴ-ում զբոսաշրջությամբ զբաղվող հայ գործարարների խոշոր ներդրումները Ջերմուկ քաղաքում, մասնավորապես ”Ջերմուկ” հյուրանոցի կառուցումը և Ջերմուկ քաղաքի “Ռեզորդ” առողջարանի կառուցումը: